«Բյուջեներ քաղաքացիների համար» Ծրագիր

Ո՞վ ենք մենք

B4C Budgets for Citizens
Բյուջեներ քաղաքացիների համար

Եվրոպական միության աջակցությամբ «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և չեխական «Ագորա Սենթրըլ Յուրըփ» ՀԿ-ի գործընկերությամբ

Ծրագրի ղեկավար կազմակերպություն, իրականացնող՝

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ
ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 7, գրասենյակ 2,
Հեռախոս՝ +37410 54 01 99
Հեռապատճեն՝ +37410 58 02 99
Էլ. փոստ՝ info@armla.am
Վեբ կայք՝ https://armla.am/

Ծրագրի գործընկերներ՝

«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ
ՀՀ, ք. Երևան, 0069, Ռուբինյանց 28/2
Հեռախոս՝ +374 55 540289
Էլ. փոստ՝ info@edrc.am
Վեբ կայք՝ https://www.edrc.am/

«Ագորա Սենթրըլ Յուրըփ» ՀԿ
Չեխիայի Հանրապետություն, 140 00
Պրահա 4, Պետրա Ռեզկա 12
Հեռախոս՝ +420 261 222 914
Էլ. փոստ՝ info@agorace.cz
Վեբ կայք՝ https://www.agorace.cz/

Իրավաբանների հայկական ասոցիացիա ARMENIAN LAWYERS' ASSOCIATION

ECONOMIC DEVELOPMENT RESEARCH CENTER EDRC

AGORA CENTRAL EUROPE

Ո՞րն է Ծրագրի նպատակը

Ծրագրի հիմնական նպատակն է՝ քաղաքացիական հասարակության մասնակցությամբ խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացը և նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ուժեղացմանը:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են հետևյալ խումբ գործողությունները.

→ Բյուջետային գործընթացին մասնակցության նպատակով ՔՀԿ-ների կարողությունների բարելավում:

→ Բյուջետային գործընթացների վերաբերյալ քաղաքացիական հասարակության իրազեկվածության և տեղեկացվածության հնարավորությունների մեծացում և բարելավում:

→ Փաստարկված հանրային քաղաքականությունների մշակում և իրականացում:

→ Հանրային վերահսկողության (մշտադիտարկման) և շահերի պաշտպանության իրականացում:

→ Կառավարության և ԱԺ-ի հետ կայուն և կառուցողական երկխոսության իրականացում:

Որո՞նք են Ծրագրի թիրախային ոլորտները

Արդարադատության, կրթության, սոցիալական աջակցության և գյուղատնտեսության ոլորտները ընտրված են որպես ծրագրի թիրախային ոլորտներ:

Ովքե՞ր են Ծրագրի թիրախային խմբերը և վերջնական շահառուները

Ծրագրի թիրախային խմբերն են՝ ՔՀԿ-ները, անկախ փորձագետները, երիտասարդ մասնագետները, ՁԼՄ-ները:

Վերջնական շահառուների կազմում ներառված են այն պետական ծառայողները, որոնք զբաղված են թիրախային ոլորտների բյուջեների մշակմամբ և կատարմամբ: Այս խումբն ընդգրկում է չորս թիրախային ոլորտների նախարարությունների, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության և Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի և ևս 4 թիրախային ոլորտների հանձնաժողովների ներկայացուցիչներին:

Ի՞նչ խնդիրներ ենք լուծելու

✓ Ֆիսկալ թափանցիկության և բյուջեի հետ կապված հանրային հաղորդակցման պրակտիկայի վերանայում և վերլուծություն:

✓ Բյուջետային տեղեկատվության փոխանակման, պարզեցման վերաբերյալ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն՝ կենտրոնանալով չեխական փորձի վրա:

✓ Իրազեկության բարձրացման և բյուջետային տեղեկատվական գործիքների նախագծում, ինչպես օրինակ՝ բյուջետային ուղեցույցներ, ոլորտային պարզեցված բյուջեներ, տեղեկատվական գրաֆիկներ:

✓ Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային նորարար հարթակի ստեղծում, որտեղ ՔՀԿ-ներին, ՁԼՄ-ներին, երիտասարդ փորձագետներին, մասնագետներին և քաղաքացիներին հասանելի կլինի մատչելի և պրոֆեսիոնալ բյուջետային տեղեկատվություն, ներառյալ՝ Ծրագրի շրջանակներում պատրաստված ոլորտային պարզեցված բյուջեներ, բյուջեների վերլուծություններ, ուղեցույցներ, ԵՄ երկիր Չեխիայի բյուջետավորման փորձը, մշտադիտարկման, շահերի պաշտպանության իրականացման արդյունքներ, փաստարկված առաջարկություններ և հանրային քաղաքականությունների փոփոխություններ, Կառավարություն-ՔՀԿ-ներ, ԱԺ-ՔՀԿ-ներ հանրային քննարկումներ, ինֆոգրաֆիկաներ ներառող տեսանյութեր և այլն:

✓ ՔՀԿ-ների հմտությունների զարգացման պլանի և կարողությունների փոփոխությանը հետևելու գործիքի մշակում: ՔՀԿ-ների հմտությունների զարգացման գործընթացում, ի թիվս այլնի, լինելու են առցանց, դեմ առ դեմ ձևաչափով դասընթացներ, մենթորություն, կազմակերպվելու են վիրտուալ այցելություններ, լավագույն փորձի ուսումնասիրություն, որին հաջորդելու է տարեկան առաջընթացի գնահատում՝ հատուկ մշակված գործիքի միջոցով:

✓ Մշտադիտարկման և շահերի պաշտպանության հիմնական հասկացությունների և բյուջետային տեղեկատվության հետ աշխատելու համար վերլուծական գործիքների վերաբերյալ պարզ, հասկանալի ուսումնական ծրագրերի մշակում:

✓ Երիտասարդ մասնագետների դպրոցի հիմնում, որտեղ կուսուցանվեն երիտասարդ մասնագետները, ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների ներկայացուցիչները: Դպրոցը կհանդիսանա նաև բյուջետային ոլորտի փորձառու մասնագետների և փորձագետների դարբնոց:

✓ Երեք տեսակի դրամաշնորհների տրամադրում **ՔՀԿ-ներին՝** բյուջեների, բյուջետային ծրագրերի և ծախսերի վերաբերյալ վերլուծությունների համար, **ՔՀԿ-ներին և ՁԼՄ-ներին՝** բյուջեների վերլուծության և մշտադիտարկման արդյունքների հիման վրա շահերի պաշտպանության քարոզարշավներ իրականացնելու և հանրային քննարկումներ և երկխոսություններ կազմակերպելու համար, **երիտասարդ մասնագետներին՝** ՔՀԿ-ների հետ համագործակցությամբ բյուջեների վերլուծություն, մշտադիտարկում և հանրային քաղաքականությունների փոփոխություններ իրականացնելու նպատակով:

✓ Աշխատաժողովների և համաժողովի կազմակերպում՝ բյուջեների մշտադիտարկման և շահերի պաշտպանության արդյունքները, ինչպես նաև քաղված դասերը ներկայացնելու համար:

Ի՞նչ կստանա հանրությունն այս Ծրագրից

Կբարելավվեն ՔՀԿ-ների կարողությունները՝ բյուջետային գործընթացներին մասնակցելու նպատակով:

Բյուջեների, բյուջետային հայտերի վերլուծության, մշտադիտարկման և շահերի պաշտպանության իրականացման միջոցով կբարելավվի հանրության մասնակցության որակը բյուջեների նախագծման գործընթացներում:

Կմեծացվեն և կբարելավվեն բյուջետային գործընթացների վերաբերյալ իրազեկվածության և տեղեկացվածության հնարավորությունները:

Կստեղծվի էլեկտրոնային հարթակ, որտեղ թիրախային խմբերը և հանրությունը կգտնեն իրենց անհրաժեշտ օգտակար տեղեկատվությունը և գործիքները:

4 կարևոր փաստ Ծրագրի մասին

◊ Ծրագրի տևողությունը 48 ամիս է՝ 2022 թվականի դեկտեմբերի 8-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 7-ը:

◊ Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից՝ 777.778 եվրո բյուջեով, որից 77.778 եվրոն ներդրվելու է Ծրագիրը համաիրականացնող կազմակերպությունների կողմից:

◊ Ծրագիրն ունի ենթադրամաշնորհային բաղադրիչ (44 դրամաշնորհ ՔՀԿ-ների, ՁԼՄ-ների և երիտասարդ մասնագետների համար):

◊ Ծրագրի շրջանակներում ստեղծվելու է Բյուջետային գիտելիքի փոխանակման էլեկտրոնային նորարար առաջին հարթակը, որը բաղկացած կլինի հետևյալ բաղադրիչներից.

→ Հարթակի տեղեկատվական բաղադրիչ, որը պարունակելու է մատչելի, հասանելի և պրոֆեսիոնալ բյուջետային գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն,

→ Հարթակի ուսումնական բաղադրիչ, որը պարունակելու է ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բյուջետային ուսուցման առցանց և առկա մոդուլները ու դրանից բխող այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

Հարթակում իր հետաքրքրությունը կգտնի Ծրագրի յուրաքանչյուր շահառու, այդ թվում՝ ՔՀԿ-ները, փորձագետները, երիտասարդ մասնագետները, ՁԼՄ-ները, պետական ծառայողները և այլոք:

Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Սույն հրապարակումն իրականացվում է «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Հրապարակման բովանդակության համար պատասխանատու է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետը: